

Handwritten text, possibly a name or title, on a small label in the top left corner.

S - 38

371

S-38

S-38

Տ. Տեր-Գրիգորեանց

MAR 2010

370

ԶԿԶ-ՏԵ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Մանկավարժական փորձ

ԳԵԿ
ԿԿԿ



Բ Ա Գ Ո Ի
Տպարան «Արամապկ»
1907

20 AUG 2013

96.067

0.5
46.2



8-96

2262-99

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն Ի Տ Ե Ղ

Իսլամը պատկանում է հասարակութեանը կամ համայնքին. դրան իբրև իրաւաբանական հիմք ծառայում է այն հանգամանքը, որ այնտեղ սովորում են հասարակութեան զաւակները: Բարոյական տեսակէտից դպրոցը պէտք է նրա խնամքին յանձնուած լինի, ով ամենից աւելի շահագրգռուած է այդ բանի մէջ: Իսլամը ամենամեծ խնամքի կարօտ հիմնարկութիւններից մէկն է. իսկ այդ խնամքը կարող է տանել միմիայն համայնքը, կամ նրա իրաւասութիւնն ու հաւատը վայելող մարմինը: Այս է թելադրում մեզ առողջ գասողութիւնը: Իսկ այն ամենը, ինչ որ բղտում է առողջ գասողութիւնից, մեզ համար պէտք է լինի օրէնք:

Իսլամական կեանքում պարբերաբար տեղի ունեցող յուզումների մեծագոյն մասը պէտք է վերագրել այն աննորմալ պայմաններին, որոնց միշտ զոհ է բերուել հասարակութեան իրաւունքը. այդ իրաւունքների նկատմամբ դպրոցը միշտ էլ եղել է մի անհօնարօղ հիմնարկութիւն: Աւելին կ'ասենք. դպրոցը մինչև այժմ գտնուել է այնպիսի անձանց ձեռքում, որոնց համար նա, բացի մի աւելորդ ծանրութիւն լինելուց, կամ նրանց որոշ նպատակներին ծառայելուց, զատ, որովհետև ներկայացել, իսկ այդ նպատակները միշտ էլ ձեռնամարտօրէն հակասել են հասարակութեան տեսչեանցներին ու կրօնի պահանջներին:

Իսլամը գտնուելով այդպիսի պայմաններում՝ մերթմընդ մերթ գտնում են իւրատումների վայր: Այդ յուզումներն աւելի քրոնիկական զարձան ու ուղիւնք գոյն ստացան վերջին տարիներս:

Նրանց արմատախիլ անելու և դպրոցը իւր բարձրութեան վրայ դնելու ամենարմատական միջոցն է դպրոցը տալ նրան, ում պատկանում է. միայն հասարակութիւնը, կամ նրա հաւատը վայելող մարմինը կարող կը լինի դըպրոցը դնել նպատաւոր պայմանների մէջ՝ դարձնելով նրան ազատ գիտութեան ազատ վայր: Ահա այն նպատակակէտը, որին պէտք է ձգտել իւրաքանչիւր հասարակութիւն՝ իւր գաւակների կրթութեան գործը սնօրինելիս:

Դպրոցը յանձնելով ըստ պատկանելոյն՝ բնականաբար անհրաժեշտ կըլինի հիմնական փոփոխութիւններ մտցնել թէ նրա ներքին կազմութեան և թէ ուսման ծրագրի մէջ: Ներկայ փորձը այն բարենորոգումների մի մասն է, որ անհրաժեշտ է մտցնել մեր ժողովրդական կամ տարրական կոչուող դպրոցներում:

Ժողովրդական դպրոց

Ա.

Ն Պ Ա Տ Ա Կ Ը.

Ընտանիք և դպրոց՝—ահա այն երկու մեծ ֆակտորները, որոնք ապագայ հասարակական կազմի երկու հիմնաքարերն են կազմում: Այդ երկու ֆակտորներն իրար լրացնում են. առանց մէկի՝ միւսը պակասաւոր է, չլրացած: Եթէ այդ այդպէս է, ապա ուրեմն հասկանալի է գառնում, թէ որպիսի հողածութեան առարկայ պէտք է դարձնենք ապագայ հասարակական կազմի այդ երկու հիմնաքարերը:

Սակայն՝ նախ բնորոշենք, եթէ ոչ լիովին, գէթ մօտաւորապէս այն հասարակութիւնը, որպիսին ցանկալի է ունենալ և այնուհետև խօսենք նրա հիմքը կազմող վերև յիշուած ֆակտորներից իւրաքանչիւրի մասին:

Իտալիայի ազատագրութիւնից յետոյ գիտութիւնների ճեմարանը այսպիսի հարց առաջարկեց.—ի՞նչ է մեզ հարկաւոր այսուհետև, — որի յաջող պատասխանի համար նշանակուած էր մրցանակ: Այդ մրցանակին արժանացաւ նշանաւոր բարոյագէտ Անդրէաս Գարբիէլիի «Բնաւորութեան կրթութիւն» աշխատութիւնը, որը շատ ստուար չէ, սակայն որը պարունակում է իւր մէջ շատ գնահատելի մտքեր: Այնտեղ նկարագրածից երևում է, որ ստրկական կապանքներից նոր ազատուած երկրին հարկաւոր են բարոյական բարձր յատկութիւններով օժտուած, հաստատուն կամքի աէր անհատներից կազմուած հասարակութիւն, որ պէտք է կարելի լինի Մաձիննիի և Գարբիբալդիի՝ ազատութեան այդ երկու հերոսների ընդգծած ուղիով ընթանալ

դէպի կատարեալ բարեկեցիկ վիճակ և մարդկային հոգու և մտածողութեան կատարեալ ազատութիւն:

Եթէ այդպիսի հարց անհրաժեշտ էր արտաքին սուրբ-կութիւնից ազատուած Իտալիային, ապա որքան առաւել ևս անհրաժեշտ է մտաւոր ու ֆիզիքական ստրկութեան կապանքներէ մէջ զտնտուղներին: Իսկ պատասխանները միշտ էլ պատրաստ են. բաւական է դիտել մեր առօրեայ կեանքը, մեր շուրջը պատող իրականութիւնը, որպէսզի պատասխանները գտնենք: Այն մղձաւանջը, որ կապարի պէս ճնշում է մեր ուզեղը, կեանքի այն դառնութիւնները՝ շնորհիւ ամենատարրական արգարութեան բացակայութեան, որոնք դէպի անդունդն են տանում այնքան մատաղ կեանքեր. պարտականութեան բացակայութիւնն ու կեանքի դժուարութիւնների դէմ կռուելու միջոցների պակասութիւնը, որի շնորհիւ կեանքը մեծամասնութեան համար դառել է դժոխք՝ բառիս ընդարձակ մտքով.—այս ամենը թելադրում են մեզ, որ հարկաւոր է, անհրաժեշտ է խորտակել ներկայումս գոյութիւն ունեցող մեր ընտանեկան ու հասարակական կազմերը և նրանց տեղը կառուցանել նոր հասարակութիւն նոր կարգերով: Եթէ չառաջնորդուենք «ուտոպիաներով», ինչպէս ներկայումս, սովորաբար, անուանում են աւելի հեռաւոր դադափարները, այլ գատենք այն ձգտումների հիման վրայ, որոնցով համակուած են մեր հասարակութեան ամենալաւ խաւերը, այն ժամանակ համարձակ կարող ենք ասել, որ մեզ հարկաւոր է կազմել այնպիսի հասարակութիւն, որի մէջ ճնշողներ ու ճրնշուողներ, կեղեքողներ ու կեղեքուողներ, ձրիակերներ ու քաղցածներ և մտաւորապէս ու հոգեպէս այլանդակուածներ, եթէ ոչ բոլորովին բացակայեն, գէթ ամենաչնչին փոքրամասնութիւն կազմեն. ուրիշ խօսքով՝ մեզ հարկաւոր են մարդկային արժանաւորութիւնն ըմբռնող ու բարձր գնահատող, ազնիւ, առողջ մարմնի ու հոգու տէր, պարտաճանաչ և, բառիս ընդարձակ մտքով, կրթուած քաղաքացիներ:

Այժմ հարց է. որպիսի պայմանների մէջ պէտքէ սնուի, մեծանայ մեր մատաղ սերունդը, կամ, աւելի ճիշտն ասած, այդ փոքրիկ քաղաքացիները, որպէսզի նրանք ապագայում կազմեն վերևում ընդգծած յատկութիւններն ունեցող հասարակութիւնը:

Մեր մատաղ սերունդը մեծանում է երեք միջավայրերում. տանը՝ ընտանիքում, դուրսը՝ ներկայ հասարակութեան մէջ և դպրոցում:

Վերջնենք առաջին միջավայրը՝ ընտանիքը: Եթէ ճիշտ է, որ երեխայի հակումներից, արտաքին շարժումներից և տնից բերած մտաւոր պաշարից կարելի է գաղափար կազմել և այն ընտանիքների մասին, որտեղ սնոււմ, մեծանում են մեր փոքրիկները, ապա, ՚ի նկատի առնելով վերջիններիս մտաւոր ու ֆիզիքական բազմաթիւ պակասութիւնները, համարձակ կարելի է ասել, որ մեր այժմուայ ընտանեկան կազմը ոչ մի դէպքում չէ համապատասխանում բարոյական ու կրթական ամենատարրական պահանջներին. աւելին կ'ասենք. մեր ընտանիքը մի այնպիսի խառնիճադանջ, ամենաթեթեւ կրիտիկայի չզիմացող պայմաններ են հանդիսանում, որտեղ մեր փոքրիկները ոչ միայն ամենափոքր կրթութիւն չեն ստանում, այլ, ընդհակառակն, այլասերում են:

Ի՞նչ է ներկայացնում երեխայի միւս միջավայրը՝ դուրսը: Եթէ ընտանիքում երեխան գուրկ է բարեյաջող պայմաններում ինքնուրոյն զարգանալուց, եթէ նրա զգացումներն այնտեղ ասպարէզ չեն գտնում զարգանալու իրանց բնական ընթացքով, այլ շարունակ կապանքների ու զանազան նախապաշարումների տակ ճնշոււմ, մանրանում են, իրանց հետ փոքրացնելով և մանկան «ես»-ը, ապա փոզոցում, դրսում, ընդհակառակն, նա ականատես է այնպիսի երևոյթների ու բարբի, որոնք իրանց ծայրայեղ արտայայտութեամբ անջնջելի հետքեր են թողնում նրա սրտի վրայ՝ ապագայում աւելի ուժեղ չափով երևան գալու համար: Մի միջավայրը վատ, քան միւսը:

Երեխան ընտանիքից և փողոցից յետոյ տեսնում է դպրոցը. երբորդ միջավայրն է այդ, որը կոչւած է նրա կեանքում մի մեծ յեղաշրջում կատարելու: Այն դպրոցը, որտեղ առաջին անգամ երեխան ոտք է դնում, մենք անւանում ենք տարրական, որպէսզի զանազանենք միջնակարգ ու բարձրագոյն դպրոցներից. բայց որովհետև այդ տարրական կոչուող դպրոցը մատչելի և անհրաժեշտ է ժողովրդի բոլոր խաւերին (ի նկատի առնելով, որ մենք ընդունում ենք ընդհանուր, պարտագիր, ձրի ուսուցումն), դրա համար էլ տալիս ենք նրան «ժողովրդական դպրոց» անունը: Մեր խօսքը, ինչպէս յօդւածիս վերնագիրն է ցոյց տալիս, ժողովրդական դպրոցի մասին է: Այդ դպրոցն է, որ կոչուած է մեր մանուկ սերնդի կեանքում ամենախոշոր դերը կատարելու. նա պէտք է իրական ուսուցման եղանակով, իրերի բնական ընթացքով արմատախիլ անէ, կամ, հակառակ դէպքում, աղօտացնէ այն մի շարք վատ հակումները և պակասութիւնները, որոնք կամ ժառանգաբար են անցել նրան և կամ նա ստացել է տանը և դրսում. դրա հետ միասին պէտք է պատուաստէ, հիմք դնէ նոր, լաւ ուղղութիւնների: Ուրիշ խօսքով ժողովրդական դպրոցը պէտք է տայ միջին կրթութեան տէր, հոգեպէս և ֆիզիքապէս առողջ քաղաքացիներ, որոնք կարողանան իրանց իսկութեամբ ըմբռնել շրջապատող երևոյթները և ունենան միջոցներ՝ կեանքի դժուարութիւնների դէմ կռուելու: Ահա ժողովրդական դպրոցի նպատակը:

Բ.

Չ Ե Ի Ը

Նախորդ գլխում ասացինք, որ ժողովրդական դպրոցը կրթական այն վայրն է, որ մօտիկ է գտնւում ժողովրդի բոլոր խաւերին: Սրանից հետևում է, որ ժողովրդական դպրոցը բաւարարութիւն տալով անխաիր բոլորի կարիքներին, պէտք է նրա մտածողութեան ու հոգու մէջ յեղաշրջում կատարէ, դուրս բերէ նրան այն մտաւոր խաւարից ու հաւատալիքների շրջանից, որի մէջ նա կաշկանդուած է. ուրիշ խօսքով հիմք դնէ նոր հասարակութեան նոր աշխարհայեացքով և նոր ձգտումներով:

Ի՞նչ ձևի ժողովրդական դպրոց պէտք է ունենանք, որպէսզի նա բաւարարութիւն տայ այդ պահանջներին:

Այն ամենը, ինչ վերաբերում է լուսաւորութեան ու կրթական գործին, մենք սովորաբար հետևում ենք մեր անդրանիկ եղբայրներին՝ կրօնացիներին, որոնք՝ շնորհիւ շատ նպաստաւոր պայմանների, կարողացել են մասամբ փշրել նախապաշարումների կապանքները և կեանքի դժուարութիւնների դէմ կռուելու միջոցներ ստեղծել: Սակայն հետևել նրանց՝ այդ դեռ չէ նշանակում, որ նրանց ունեցածը մենք պէտք է անփոփոխ մտցնենք մեր կեանքում: Իւրաքանչիւր ժողովուրդ ունի իւր կեանքի առանձնայատուկ կողմերը, ուրոյն պայմանները, որոնց աչքաթող անել չենք կարող: Ահա այդ առանձնայատուկ կողմերն ՚ի նկատի առնելով՝ պէտք է կրօնականը յարմարեցնենք մեր կեանքին, մասամբ կրճատելով, մասամբ աւելացնելով, և, վերջապէս, այն ամենը, ինչ որ կրօնական է, դեռևս հեռու է բոլորովին կատարեալ լինելուց. այնտեղ էլ դեռ գոյութիւն ունի շատ պակասութիւններ ու նախապաշարումներ:

Մեր յայտնի մանկավարժները մանկավարժական հրմուռթիւն ձեռք բերելու համար ընդհանրապէս զիմուժ են Գերմանիա: Բայց միթէ գերմանական դպրոցներն ամենակատարեալներն են Եւրոպայում. ինչու չուսումնասիրել և, օրինակ, Անգլիական ու Ամերիկական տարրական դպրոցները: Մենք Գերմանիայում չենք եղել, սակայն գրականութեան միջոցով ծանօթ լինելով մասամբ նրանց ուղղութեան և կազմի հետ, չենք կարող անուշադիր թողնել մի քանի խոշոր պակասութիւններ, որոնք շնորհիւ որոշ բւրօկրատիք ուժի մի տիրում են այնտեղ: Վայրենի ձեծը, որ գործադրում է այնտեղ, որպէս դաստիարակութեան միջոց և որի մասին սոսկալի փաստեր է բերում կին գրող Ելլեն Կէյ իւր „Մանկան դար“ վերնագրով գրքի մէջ. այն անտիրտ, հակամարդկային, դեռ մի կողմը թողնելով հակամանկավարժական, վարմունքը, որ տիրում է նրանց դպրոցներում լեճ երեխաների վերաբերմամբ. այն նախապաշարումը ու կրօնական մոլեռանդութիւնը, որով սնոււմ են երեխաները ամենափոքր հասակից, որի ապացոյցն է Սուրբ գրքի ուսուցումը ամենալայն չափով. միթէ այս բոլոր փաստերը բաւական չեն համոզուելու, որ Գերմանիայի տարրական դպրոցները իրանց ուսման ծրագրով ու ներքին կարգ ու կանոնով այն կատարեալ տիպի դպրոցները չեն, որ մենք երեսակայում ենք Ֆրէօբելի ու Պետալոցցիի մասին կարգալիս:

Մենք տարրական կամ ժողովրդական դպրոցի համար ուսման ծրագիր ու ձև մշակելիս երբէք չպէտք է կուրօրէն հետևենք գերմանականին, այլ պէտք է առաջնորդուենք այն պահանջներով, որ մեր կեանքը անմիջապէս առաջադրում է:

Այստեղ կ'ընդգծենք մօտաւորապէս այն ներքին բարեփոխութիւններն ու պայմանները, որոնք անհրաժեշտ են մասնաւորապէս մեր ժողովրդական դպրոցների համար:

Շատ անգամ մեր դպրոցական վարչութիւններից դուք կըլսէք գանգաւաններ, որ ծնողները օգնութեան չեն գալիս դպրոցին, որ ուսուցիչն անկարող է մի քանի ժամուայ

ընթացքում արմատախիլ անել այն վատ յատկութիւններն ու հակումները, որ արմատ են ձգել երեխայի մէջ՝ շնորհիւ ընտանեկան վատ պայմաններին:

Տրամաբանօրէն շատ ճիշտ նկատողութիւն է, բայց որքան իրաւացի պահանջ է և որքան իրական հողի վրայ դրուած: Մի ընտանիքի հայր ու մայր, որոնք ամբողջ օրը ամենաշարքաշ ու տաժանելի աշխատանքով են զբաղուած, որպէսզի օրեկան պարէնը հայթայթեն, կամ այն ծնողները, որոնք դուրի լինելով ամենատարրական կրթութիւնից՝ փոքր գաղափար անգամ չունին մանկավարժական պահանջներին մասին, դեռ թողնում ենք մի կողմ արատաւորներին. այսպիսի ծնողներն ինչպէս կարող են սատար լինել դպրոցական գործին. իսկ չէ՞ որ մեր ներկայ ընտանիքներից մեծամասնութիւնը կազմուած են վերև յիշած անհատներից:

Ուրեմն յոյս դնել ու պահանջներ անել մեր ծնողներից, որոնց 80%՝ անգրագէտ է, աւելորդ է: Ներկայ յօգւածիս սկզբում նկատել էինք, որ մեր ներկայ ընտանեկան կազմը ոչ մի կերպ չէ համապատասխանում կրթական ամենատարրական պահանջներին. նշանակում է մենք դպրոցների միջոցով պէտք է պատրաստենք ապագայ ընտանիքի անդամներ. պէտք է տանք նրանց այն պատրաստութիւնը, որ անհրաժեշտ է կրթական պահանջներին համապատասխանող ընտանիքի անդամներին:

Այս բոլորից հետևում է, որ ժողովրդական դպրոցը մասնաւորապէս իւր ներքին կեանքով պէտք է նմանէ մի օրինակելի, կրթական բոլոր պահանջներին բաւարարութիւն տուող ընտանիքի: Բարեկարգ ընտանիքը միայն կարող է արմատախիլ անել մանկան հոգուց այն արտանները, որոնք նա տուացել է մի ուրիշ աւելի վատ պայմաններում դրուած ընտանիքում:

Գպրոցում ամենից առաջ պէտք է բարձրացնել թէ իւր և թէ շրջապատողների աչքում մանկան «ես»-ը, որն այնքան ստորացնում է թէ տանը և թէ դրսում. նրան պէտք

է ներշնչել պատուոյ զգացում, թէ դէպի իրեն և թէ դէպի շրջապատողները: Երեխաների շարութիւններին ամենից շատ ծնունդ տուողը պատուասիրութեան զգացման բացակայութիւնն է. պատուասէր երեխան անտարբեր չէ կարող լսել ուսուցչի արած նկատողութիւնը. նա, սովորաբար, խուսափում է այնպիսի արարքներից, որոնց հետևանքը լինում է ուսուցչի նկատողութիւնը: Շատ յանցանքներ, որ գործում են բարձր կրթութեան տէր, բայց անպատուասէր, անհատներ, ընդհակառակն միջակ ու որոշ դպրոցական կրթութիւնից զուրկ, բայց պատուասէր, անձնաւորութիւններ խուսափում են կատարելուց: Այս բանից պարզ է, որ մեր փոքրիկները որքան պատուասէր լինեն, որքան պատուոյ զգացումը մեծ տեղ բռնէ՝ նրանց բնաւորութեան մէջ, այնքան նրանք պարտաճանաչ ու ազնիւ քաղաքացիներ կը լինին:

Տեսնենք, ինչպէս ենք զարգացնում մեր մատաղ սերունդի մէջ պատուոյ զգացումը:

Մեր տարրական դպրոցներում սովորող երեխաների մի ստուար մասը, համարեն, կիսամերկ է. միւս մասը՝ քաղցած, իսկ մեծամասնութիւնը, շատ քիչ բացառութեամբ, կեղտի մէջ կորած: Բացառութիւն կազմող բաղաւորներն ունին նոր կօշիկներ, կուշտ են, նոր հագնուած և դասական պիտոյքների մէջ կարիք չեն զգում: Ուսուցիչը, որպիսի գաղափարական էլ մարդ լինի նա, խորշում, յաճախ զգուշանում է մեծամասնութիւն կազմող դժբաղդներին մօտենալ. իսկ մի քանիսներին, որոնք մաքուր են, մօտենում, փայփայում է: Մանկան սիրտը աւելի զգայուն է, որովհետև աւելի քիչ բան է տեսել ու զգացել. արտաքին ամենաչնչին սպաւորութիւններն իրանց խոր ազդեցութիւնն են թողնում նրա հոգու վրայ: Վերև յիշածս հակառակ երևոյթների ենթակայ լինելով՝ մի խումբ դժբաղդներ զգում են իրանց ստորացած. նրանց մէջ ստեղծում է նախանձ, այս դէպքում, ՚ի հարկէ, չար, ատելութիւն դէպի շրջապատողները և մեղամաղձութիւն: Դասամիջոցին

նախաճաշում է ունեւոր ընկերը, իսկ միւսները կամ ոչինչ չունեն ուտելու և կամ մի կտոր չոր հաց ունեն: Չունենալու դէպքում կամ ծածուկ վերցնում են ունեցողից, որից նրանց մէջ առաջանում է գողութեան հակումն, կամ խնդրում են, որ ստեղծում է ստորաքարշութիւն և անպատուասիրութիւն, իսկ երբեմն փոխ են վերցնում՝ ստացածից աւելի վերագարձելու պայմանով, որ վաշխառութեան սկիզբն է դնում.—յատկութիւններ, որոնց դէմ դպրոցը պարտաւոր է ամենայն ուժով կռուել: Միևնոյն բաները կատարում են և դասական պիտոյքների ու կըրկնակօշիկների նկատմամբ:

Մեր դպրոցներում այդ չարիքների դէմ միայն ըստ երևոյթին կռուում են. այսինքն ուսուցիչը՝ օգտուելով դասազբքի որևէ բարոյակրթական յօդուածից կամ ազատ ընթերցանութիւնից, աշխատում է ունեւոր աշակերտների մէջ զարթեցնել բարեգործութիւն, իսկ չունեւորներին հասկացնել, որպէս թէ նրանց ստացածը ունեւորների բարերարութեան հետևանքն է. իսկ մեր կարծիքով այն ամենը, ինչ որ անում է բարերարութեան անուան տակ, շատ վնասակար ու վիրաւորական է. մեր մէջ պէտք է գոյութիւն ունենայ ոչ թէ բարերարութիւն կամ բարեգործութիւն, այլ միմիայն պարտականութիւն:

Մեր հասարակութիւնը կամ դպրոցական վարչութիւնները բարեգործութեան անուան տակ աղքատ աշակերտներին հագուստ ու կօշիկ են բաժանում. բայց ի՞նչպէս է կատարում այդ բարեգործութիւնը և ինչ ազդեցութիւն է թողնում մանուկների վրայ: Ամենից առաջ ուսուցիչը պէտք է տեղեկութիւններ ժողովէ չքաւորների մասին. նա դիմում է աշակերտներին՝ թէ ով է չքաւոր և ինչու: Կանգնում է դասարանի $\frac{1}{3}$ -ը կամ կէսը: Կանգնածները նայում են նստածներին, իսկ նստածները՝ կանգնածներին և, գիտէք, ինչ է փոխանակում այդ մի հայեացքում:—Զգայունների մէջ, որոնք դեռ չեն կորցրել մանկական անմեղութիւնը, յառաջանում է սաստիկ ամօթի զգացում,

խայթ, իսկ, որոնք մի քանի անգամ եղել են արդէն այդպիսի դրութեան մէջ, ամօթի ու պատուասիրութեան զգացմունքների ոչնչանալու նոր հանգամանք: Իսկ այն մի շարք սակարգութիւնները, որոնք տեղի են ունենում աշակերտի ու ծնողի և միւս կողմից ուսուցչի ու գալրոցի վարչութեան մէջ, որպէսզի ապացուցուի աշակերտի չքաւորութիւնը, այն մի շարք մուրացկանական, նոյն իսկ զրգուելի դիմումները, որ աշակերտներն անում են ուսուցչին կամ գալրոցի վարչութեանը, շատ անգամ չքաշուելով նոյն իսկ ուրիշների ներկայութիւնից, և, վերջապէս, զրանց վրայ աւելացրէք և այն, որ շատերը գիտամամբ, կամ ծնողների թերազրութեամբ և կամ իրանց ինիցիատիւով հին, պատառոտուն հագուստներ են հագնում, որպէսզի աւելի աղքատ երեան. այս բոլորից յետոյ պարզում է, թէ գրգրոցի վարչութիւնն աղքատ աշակերտներին հագուստ կամ կօշիկ բաշխելով իրօք չարիքը վերացրեց, թէ՛ նոր և աւելի վատ չարիքների ծնունդ տուեց:

Ուսուցիչը, որքան էլ բացատրէ այդ չարիքների անբարոյական կողմերը, սակայն քանի չեն վերացուի այդ աննպաստ պայմանները, նրանք միշտ կը մնան: Մանուկներն այս դէպքում ենթակայ են երկու հակազդեցութիւնների. մէկը՝ ուսուցչի ասածները կամ կարգացածը՝ բանաւոր, վերացական, միւսը՝ տիրող պայմանները՝ իրական կեանքը: Կարծում ենք ոչ ոք յաւակնութիւն չի ունենալ սնդեղու, որ աշակերտը աւելի շուտ կ'ենթարկուի ուսուցչին, քան թէ իրականութեանը:

Ուրեմն վերև բերածից ստացւում է հետևեալ պատկերը. այն, ինչ ուսուցիչը իւր թոյլ ձեռքերով շինել է փորձում, գալրոցի իրական կեանքը աւելի հզօր ձեւքով կործանում է: Այստեղ դեռ չենք յիշատակում ուսման վճարը չվճարելու պատճառով մանուկներին գալրոցից հեռացնելու անմարդասէր ու անարդար օրէնքը:

Այս պայմաններում պահելով ժողովրդական գալրոցները, երբէք չի կարելի յուսալ, որ մենք կըրտանք քիչ թէ

շատ յուսալի, հաւասարութեան ու ինքնաճանաչութեան գաղափարներով տոգորուած քաղաքացիներ:

Այդ անօրմալ դրութեան դէմ կոռուելու ամենարացիօնալ միջոցն է՝ վանել գալրոցից այն մի շարք աննպաստ պայմանները, որոնք պարարտ հող են ներկայանում վերև յիշած չարիքների երևան գալուն: Վերացնելով նրանց, մենք ամենաքիչը անզօր դարձրած կըլինինք այն մի շարք ատելի յատկութիւնները, որոնք ծնւում են ասնք, սնւում ներկայ գալրոցում և կատարելութեան աստիճանին հասնում գրտում:

Արդէն վերև ասացինք, որ այդ նպատակին հասնելու համար պէտք է գալրոցը դարձնենք մի բարեփոխուած ընտանիք, որտեղ մանուկներն ստանան և մտաւոր, և հոգեւոր, և ֆիզիքական սնունդ: Մենք նրանց համար պէտք է ստեղծենք մի այնպիսի աշխարհ, որը տարբերուի ներկայ միջավայրից իր հաւասարութեան, լայն ազատութեան և մարդկային արժանապատուութիւնը բարձրացնող գաղափարներով: Այդ նոր աշխարհում լաւի, գեղեցկի, արհուլութեան ներշնչումներն այնքան զօրեղ պէտք է լինին ու իրական հողի վրա գրուած, որ դրսի նեխուած օդը անկարող լինի քայքայել, այլասերել մանկան հողին:

Այդ նոր ընտանիք-գալրոցը մեզ ներկայացնում ենք այսպէս. բ ո լ ո Ր ե Ր ե խ ա ն ե Ր ն ա ն խ ա ի Ր, հ ա լ ա շ ա ը ա պ է ս գ ա լ Ր ո Յ ո Ւ մ ս տ ա ն ո Ւ մ ե ն հ ա գ ո Ւ ս ա, կ օ շ ի կ, դ ա ս ա կ ա ն պ ի ա ո յ ք ն ե Ր, ն ա խ ա ճ ա շ և պ ա ը ա ա դ ի Ր ո Ւ ս ո Ւ մ ա ո ա ն ջ ն ը ը ա ն ջ ծ ա ծ կ ե լ ո Ւ ո Ր և է «բ ա Ր ե գ ո Ր ծ ո Ւ թ ե ա ն» ա ն ո Ւ ա ն տ ա կ:

Ամբողջ հասարակութիւնը իւր ներկայացուցիչ-հողաբարձութեան միջոցով, կամ գանձարանին պարտաւորացնելով ապահովում է գալրոցների գոյութիւնը, որոնց կառավարելու համար ընտրում է իւր ներկայացուցիչ խորհուրդը: Այն ժամանակ կը վերանան և մի շարք հակամանկավարժական ու հակամարդկային սովորութիւնները, ինչպէս

օր. դպրոցում տեղ չլինելու կամ ուսման վարձ չվճարելու պատճառով երեխաներին դպրոցից բռնելը: Իսկ դպրոցը երեխաների գլխավոր յաճախելու վայրն է, որտեղ իւրաքանչիւր ծնող առանց մի-րոպէ կասկածելու ուղարկում է երեխային. եթէ մենք այդտեղից էլ բռնենք, ապա նրանք ուր պիտի գնան, փողոց: Բոլոր երեխաները որոշ հասակից սկսած անխտիր՝ թէ աղջիկ և թէ տղայ, թէ ունևոր և թէ աղքատ միևնոյն դպրոցում կողք-կողքի նստած կ'ուսանեն միևնոյն հաւասար պայմաններում պարտադիր կերպով. այն ժամանակ մենք ստիպուած չենք լինիլ երկու սեռի համար ջուղ-ջուղ դպրոցներ պահելու, որը՝ թողնելով մանկավարժական պահանջները, տնտեսական տեսակէտից ևս ձեռնուտու է: Այն ժամանակ երեխաների հետ, հագուստ բաշխելիս ոչ մի սակարգութիւն կամ չքաւորութեան ապացոյցներ պէտք չեն լինիլ, որովհետև ամենքն են պարտադիր կերպով ստանում միատեսակ հագուստ: Նրանք կ'ունենան առանձին սեղանատուն, ուր որոշուած ժամին ամենքն անխտիր կըստանան միատեսակ նախաճաշ. այլևս ունևորներն իրանց հետ ոչինչ չեն բերիլ դպրոց, իսկ չունևորները չեն մնալ քաղցած և կամ ստիպուած չեն լինիլ խընդրելու կամ գողանալու: Ուրեմն դպրոցում հարստի ու աղքատի նշանները կը չքանան: Իսկ ինչ բան աւելի քան կարող է աշակերտների մէջ հասարակական կեանք դարգացնել, իրար մօտեցնել, եթէ ոչ՝ այսպիսի բնտանիքը, որտեղ ծայրայեղ տարբերութիւնները բացակայում են, չկան հարուստ ու աղքատ, այլ կան լոկ աշակերտներ, մի բնտանիքի հաւասար գաւակներ:

Այսքանը ժողովրդական դպրոցի ներքին կեանքի կամ նրա ձևի մասին: Այժմ անցնենք ուսման ծրագրին:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԿԵՆ



Ո Ւ Ս Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Դ Կ

Ժողովրդական դպրոցի նպատակն այսպէս որոշեցինք. նա պէտք է տայ միջին կրթութեան տէր ինտելիգենտ քաղաքացիներ. այսինքն ժողովրդական դպրոցի լիակատար դասընթացքն աւարտողներն ընդունակ պիտի լինին կեանքի դժւարութիւններին մասամբ յաղթահարել և շրջապատող երևոյթներն իրանց իսկութեամբ ըմբռնել: Բացի այդ ընդհանուր նպատակից՝ պէտք է այնպէս յարմարեցնել, որ ժողովրդական դպրոցի ստորին որևէ դասարանից առանց դժուարութեան և առանց քննութեան աշակերտները կարողանան մտնել միջնակարգ-հանրակրթական (գիմնազիա, ուսուցչանոց) և միջնակարգ-մասնագիտական (տեխնիքական, գիւղատնտեսական) դպրոցները: Ուրեմն ժողովրդական դպրոցում սովորող երեխան հնարաւորութիւն պէտք է ունենայ՝ ա) աւարտելուց յետոյ մտնել կեանք և ինքնակրթութեամբ լրացնելու իւր պակասը և բ) որոշուած դասարանից, որը մենք համարում ենք գ. բաժանմունքը, մտնելու բոլոր միջնակարգ դպրոցների Ա. դասարանը: Ահա ժողովրդական դպրոցի ուսման ծրագրի միջնամալ չափը, որ մենք հնարաւոր ենք գտնում իրագործելու:

Քանի՛ տարուայ դասընթացք պէտք է ունենայ ժողովրդական դպրոցի լիակատար ծրագիրը:

Այս հարցին պատասխանելու համար պէտք է մի ուրիշ հարց տալ. քանի՛ տարեկան երեխային պէտք է թոյլ տալ կեանք մտնելու. իսկ կեանք մտնել՝ նշանակում է սեպհական աշխատանքով ապրուստ հայթայթել:

Ապագայ քաղաքացիներին բնորոշելիս մենք շեշտել էինք, որ նրանք պէտք է լինեն ֆիզիքապէս և մտաւորապէս առողջ: Ուրեմն սրանից պարզ է, որ պատանիներն այն հասակում պիտք է մտնեն ծրագրից, աշխատելու, երբ

8-96

1922

2262-79



ՀԱՅԿԵՆ

բաւականին ամրապնդուած են, աշխատանքին հետևող դժուարութիւններին դիմանալու: Այդ հասակը մենք ընդունում ենք առնուազն 14 տարին: 14 տարեկան երեխան հազիւ կարող է տանել այն ծանրութիւնը, որ կապուած է իւրաքանչիւր զբաղմունքի հետ. իսկ եթէ 'ի նկատի առնենք զործարանների ու արհեստանոցների օդն ու այլ աննպաստ պայմանները, այդ դէպքում, բացի այն, որ այդպիսի տեղեր մտնող երեխաները 14 տարեկանից պակաս չպէտք է լինին, այլև նրանց համար աշխատելու աւելի քիչ ժամանակ պէտք է նշանակուի: Հասկանալի է, որ երեխան մինչև 14 տարեկան հասակը պարապ չպէտք է լինի. այդ ժամանակամիջոցում նա պէտք է կարևոր գիտելիքներ ձեռք բերէ. նշանակում է ժողովրդական դպրոցն այնքան. տարուայ դասընթացք պէտք է ունենայ, քանի տարուց յետոյ երեխան կըլինի 14 տարեկան: Եթէ դպրոց մանելու տարիքը ընդունենք 6, ուրեմն դպրոցը պէտք է ունենայ 8 բաժանմունք: Երեխայի տարիքը 6-ն ենք ընդունում, որպէսզի նա հնարաւորութիւն ունենայ աւելի շուտ ծանօթանալու դպրոցի առողջարար միջնորդի հետ. իսկ մինչև 14 տարեկանը նա պարտադիր կերպով պէտք է յաճախէ դպրոց:

Մինչև 7 տարեկան հասակը երեխաներին սովորաբար ուղարկում են մանկական պարտէզ, բայց որովհետև շատ քիչ քաղաքներում միայն հնարաւոր է մանկապարտէզներ ունենալը, իսկ գիւղերում բոլորովին անհնարին, ուստի և մեր ծրագրած ութ բաժանմունքներից ամենից ստորինը պէտք է լինի նախակրթարան, որը իւր ծրագրով կըհամապատասխանէ մանկապարտէզի վերջին բաժանմունքին: Այսպէս ուրեմն՝ ժողովրդական դպրոցը բաղկացած կըլինի մէկ նախակրթարանից և եօթն բաժանմունքներից. այս կըլինի նրա լիակատար դասընթացքը:

Մակայն այստեղ աչքի առաջ պէտք է ունենալ մի հանգամանք: Մենք ունինք շատ գիւղեր, որոնք բաղկացած են 30, 50, 70 և 100 տներից. որպիսի գիւղերում պա-

հել լիակատար ութնամեայ դասընթացքով ժողովրդական դպրոց՝ միտք չունի: Իրա համար մենք կ'առաջարկէինք հետևեալ միջոցը: Այն գիւղերը, որոնք ունին 30—50 ծուխ, կունենան մի ուսուցիչ՝ նախակրթարանով և երկու բաժանմունքներով դպրոց. 70—100 ծուխ ունեցող գիւղերը, կ'ունենան երկու ուսուցիչ՝ նախակրթարանով և երեք բաժանմունքներով դպրոց. իսկ այն գիւղերը, որոնք կազմուած կըլինին 120 և աւելի ծխերից, կ'ունենան լիակատար ութնամեայ դասընթացքով դպրոց: Որովհետև, շատ քիչ բացառութեամբ, մեր գիւղերը երեքով, չորսով և աւելի խմբուած են լինում սովորաբար, որոնք իրարից հեռու են լինում 1—3 վերստ տարածութեամբ, դրա շնորհիւ էլ փոքր գիւղերում երկրորդ և երրորդ բաժանմունքներն աւարտողները կարող են յաճախել կենտրոնական գիւղի լիակատար դասընթացքով դպրոցը, որտեղ նրանք կ'ընդունուին հետևեալ բաժանմունքում առանց քննութեան:

Իւրաքանչիւր ուսուցիչ միևնոյն ժամում միմիայն մի բաժանմունքի հետ պէտք է պարապէ. բացառութիւն կարող են կազմել նախակրթարանն ու Ա. բաժանմունքը, որոնց միացնելը առանձին դժուարութիւն չի կարող յառաջացնել: Այսպէս ա. կարգի գիւղերում մի ուսուցիչը առաւօտեան ժամը 9-ից մինչև 11-ը պարապում է նախակրթարանի և Ա. բաժանման հետ. ժամը 11-ին ժողովում են Բ. բաժանման աշակերտները, որոնց հետ ուսուցիչը պարապում է մի դաս և արձակում տուն ճաշելու: Ծաշից յետոյ ժամի 1-ին կրկին ժողովում են Բ-րդ բաժանման աշակերտները, որոնց հետ ուսուցիչը պարապում է կրկին երկու դաս: Այսպիսով ուսուցիչը առանց դժուարութեան հինգ ժամուայ ընթացքում կարող է պարապել երեք բաժանմունքների հետ զատ-զատ, առանց գիմելու նախկին տաժանելի աշխատանքին, միաժամանակ, միևնոյն դասարանում և ժամում պարապելով երեք բաժանմանց հետ: Այդ կարգով և կըպարապեն երկու ուսուցիչները չորս բաժանմանց հետ:

Այժմ անցնենք ուսման չափին ու առարկաների ընտրութեանը:

Ինչո՞վ պէտք է առաջնորդուել տարրական դպրոցի համար ծրագիր մշակելիս. այդ հարցին պատասխանելու համար պէտք է որոշել մի բան. ի՞նչ պէտք է գիտենայ այդ դպրոցն աւարտողը:

Փողովրդական դպրոց աւարտող երեխան պէտք է ճանաչէ իւր ներքին և արտաքին աշխարհը, կարողանայ կանոնաւոր թէ բանաւոր և թէ գրաւոր արտայայտել իւր մտքերն ու սպաւորութիւնները: Նա պէտք է ճանաչէ այն վայրը, որտեղ ապրում է, այն ժողովրդին, որի հետ շրջւում է, այն բնութիւնը, որի պատահարները ու դժուարութիւնները դէմ կոչուած է կռուելու. նա պէտք է ծանօթ լինի վարչական այն սխտեմի հետ, որին ինքը ենթարկուած է. նա պէտք է ճանաչէ այն ազգը, որի մի մասն է կազմում իր համայնքը, այն հարեաններին, որոնց հետ շփւում են և, վերջապէս, նա պէտք է ճանաչէ ամբողջ մարդկութիւնը, որի մի հատուածն է կազմում իւր ազգը. նրան պէտք է ծանօթ լինին մարդկութեան արտադրութիւնները և պէտք է ճանաչէ ամբողջ աշխարհը: Ահա այս պէտք է ծառայէ մեզ համար որպէս ուղեցոյց, տարրական դպրոցի ծրագիր մշակելիս: Ուրեմն առաջնորդուելով այդ ուղեցոյցով՝ տարրական դպրոցներում պէտք է մտցնել հետևեալ առարկաները.

Անհրաժեշտ առարկաներ.

- ա. Մայրենի լեզու.
- բ. Հայրենագիտութիւն.
- գ. Բնական գիտութիւններ.
- դ. Մաթեմատիկայ.
- ե. Ռուսաց լեզու.
- զ. Ֆիզիքական մարզանքներ.
- է. Նկարչութիւն և ձեռագործ.
- ը. Երգ.
- թ. Կրօն:

Ա. Մ ա յ ր ե ն ի շ ե գ ու ռ

Կովկասահայ բարբառը չէ յառաջադիմում մանաւանդ վերջին տարիներս. մեր բարբառը արեւմտեանի համեմատութեամբ շատ յետ է. որքան երկրորդը ճկուն ու ճոխ է իւր դարձուածքներով ու բառերով, այնքան մերը աղքատ է: Այդ պակասութիւնը, բացի իւր արտաքին պատճառներից՝ կառավարութեան հալածանքը, հայի բնատրութեան մէջ այն պախարակելի գիծը, որով նա նախապատուութիւն է տալիս աղճատուած օտար լեզուով խօսալուն, քան իւր մայրենի լեզուով, ունի և իւր ներքին պատճառները: Մեր մայրենի լեզուն չէ յառաջադիմում և հայոց դպրոցներում, որտեղ համարեա բոլոր առարկաները հայերէն են անցնում:

Դպրոցում լեզուի յառաջադիմութեանը նպաստում են՝ ա. կանոնաւոր կազմած գասագրքերը, բ. կենդանի խօսակցական լեզուն և գ. գրաւոր աշխատանքները:

Մինչև այժմ մեր լոյս տեսած մայրենի լեզուի գասագրքերը շարունակ աչքի են ընկել իրանց պակասութիւններով: Դասագրքերը պէտք է կազմուած լինեն որոշ սխտեմով, յօդուածները պէտք է ունենան ներքին կապ ու յաջորդականութիւն: Նրանց բովանդակութիւնը, մանաւանդ մինչև բ. բաժանմունքը, պէտք է անպայման կապ ունենայ հայրենագիտութեան հետ. յօդուածների լեզուն պէտք է վերին աստիճանի մշակուած ու քերականական բոլոր կանոններին համապատասխան լինի. նրանց մէջ սկզբից մինչև վերջ պէտք է պահպանուած լինի միատեսակ ուղղագրութիւն: Դասագրքերի նպատակներից գլխաւորն է աշակերտներին ծանօթացնել օրինակելի հայերէնի հետ, իսկ մեր շատ գասագրքերում՝ շնորհիւ շատ անգամ օտար լեզուներից կիսագրագէտ թարգմանութիւնների, բացի անկանոն դարձուածքներից յաճախ կրպատահէք գոեհիկ գաւառաբարբառների: Աշակերտները գաւառաբարբառների հետ սովորաբար պէտք է ծանօթանան

հալերէնը լաւ ուսումնասիրելուց յետոյ: Յօդուածները պէտք է լինեն հակիրճ ու բովանդակալից. մեր դասագրքերում յաճախ պատահում են մի քանի երեսներից ու թերթերից բաղկացած յօդուածներ, որոնք թէ ձանձրացնում են աշակերտներին և թէ ուսուցչի անցնելու նիւթը կրճատում:

Աշակերտներն առաջին օրուանից սկսած պէտք է գրեն այն, ինչ որ անցնում են բանաւոր. բանաւորն ու գրաւորը պէտք է զուգընթացաբար առաջ գնան: Գրաւոր աշխատանքը միմիայն ուղիղ տառերով գրելուն չպիտի նպաստէ, այլ և նա պէտք է ծառայէ մտքերի ուղիղ արտայայտելուն: Այդ պատճառով մինչև այժմ գործադրուած արտագրութիւն ու թելադրութիւն կոչուած մեքենայական աշխատութիւնները բոլորովին պէտք է վանել դասաւանդութիւնից: Աշակերտներին նախ պէտք է ընտելացնել կանոնաւոր նախադասութիւններ կազմելուն բանաւոր կերպով. նախադասութիւնները պէտք է կազմել հակիրճ, առանց զանազան «որ»-երի, որոնք այնքան երկարացնում ու տաղտկալի են դարձնում ոճը, նրանց փոխարէն պէտք է ուշք դարձնել դերբայների վրայ ու օգտուել նրանցից. շատ անգամ մի դերբայով կարելի է արտայայտել ամբողջ երկրորդական նախադասութիւն, առանց նախադասութեան միտքը խանգարելու: Այդ ձևով կազմած ու մշակած նախադասութիւնների բառերը վեր են ածւում վանկերի, վանկերը՝ —տառերի, և, երբ ուսուցիչը համոզուած է, որ աշակերտները կարող են առանց սխալի գրել, այն ժամանակ թոյլ է տալիս գրելու: Այդպիսի վերլուծութիւնների ժամանակ, որքան այդ համապատասխանում է աշակերտների հասունութեանը, ուսուցիչը ծանօթացնում է նրանց և պատահող քերականական կանոնների հետ. այդ ձևով աշակերտները միաժամանակ թէ մեքենայօրէն և թէ գիտակցօրէն ընտելանում են ուղղագրութեանը, որը գործադրում է մինչև Գ. բաժանմունքը, երբ արդէն աշակերտները կարող են իւրաքանչիւրը իւր ճաշակի ու հասկացո-

ղութեան համաձայն նախադասութիւններ կազմել ու գրել: Այս դէպքում դարձեալ ուսուցիչը պէտք է կասկածելի բառերը բացատրէ. որովհետև աշակերտն առաջին անգամ տառասխալ անելուց յետոյ, որքան էլ յետոյ գիտակցում ու արտագրում է, դարձեալ դժուարութեամբ է ուղղում նրան:

Աշակերտներին պէտք է ընտելացնել մաքուր հայերէնին. դրա համար ուսուցիչները պէտք է խուսափեն զաւառաբարբառներով խօսալուց, նոյնը սովորացնելով և նրանց: Աշակերտների մէջ պէտք է զարթեցնել ճաշակ բառերի ընտրութեան գործում. մանաւանդ ուշք պէտք է դարձնել աշակերտների նկարագրական ոճի վրայ: Դասատանի չորս պատերի մէջ և միայն դասագրքերի օգնութեամբ չի կարելի լեզու ուսուցանել. լեզուն պէտք է անցնել և դրսում զբօսանքների ժամանակ: Կեանքը գլխաւորապէս դրսումն է, դասարանից դուրս, և այդ կեանքը նկարագրելու համար հարկաւոր է համապատասխան լեզու: Այդ նպատակով աշակերտները յաճախ ուսուցչի ուղեկցութեամբ զբօսանքի գնացած ժամանակ, նկարագրում են այն սարը, որ իւր յաղթ կատարը ամպերի մէջ է թագցրել, այն ձորը, որի միջով խոխոջալով հոսում է առուակը, ուր ձուռողում են թռչնիկները: Նրանք նկարագրում են վերջալոյսը, ձիւնով ծածկուած աշխարհքը, նախրի դարձը, երկրագործի աշխատանքը դաշտում և այլն, աշխատելով միանգամայն ճշգրիտ ու յարմար նմանութիւններով ու ձևերով արտայայտել այդ բոլորը: Սօսակցութեան ժամանակ պէտք է գործնականապէս ընտելացնել քերականական կանոններին: Այս վերջին հանգամանքների վրայ պէտք է ուշագրութիւն դարձնեն և մնացած առարկաների ուսուցիչները. դրա համար էլ ցանկալի է, որ տարրական դպրոցների բոլոր ուսուցիչները նախ և առաջ տիրապետեն հայոց լեզուին:

Վերև բերածներից հետևում է, որ քերականութիւնը զուգընթացաբար անցնում է բանաւորի ու գրաւորի հետ և ոչ որպէս զատ առարկայ.

Գ. Բաժ. վերջացնելիս աշակերտներն արդէն զիտեն կանոնաւոր առողջանութեամբ ընթերցանութիւն. ծանօթ յօգուածների կանոնաւոր արտայայտումն բանաւոր ու գրաւոր՝ առանց նշանաւոր քերականական սխալների: Նրանք իւրացրած են. շնչաւոր ու անշունչ առարկաներ, հասարակ ու յատուկ գոյականներ, եզակի ու յոգնակի թւեր, դերանուններ, թւական անուն, բայեր. ներկայ, անցեալ անկատար, անցեալ կատարեալ, ապառնի ժամանակներ, հրամայական եղանակ, անորոշ, անցեալ ու ապառնի դերբայներ և քերականութեան այդ մասին վերաբերեալ ուղղագրութիւնը: Պարզ նախադասութիւններ, առողջանութեան նշաններ, բառ, վանկ ու տառեր:

Է-րդ բաժ. աւարտողները զիտեն ամբողջ քերականութիւնը (ստուգաբանութիւն և համաձայնութիւն). կարողանում են առանց քերականական սխալների նկարագրել ծանօթ առարկաներ և երևոյթներ: Նրանց ծանօթ են արևելեան և արևմտեան գրողներից նշանաւորագոյնները և նրանց երկերը:

Բ. Յ ա յ ր ե ն ն ա գ ս ի ո ղ ր ի ղ և ն .

Հայրենագիտութիւնն սկսում է ա. բաժանմունքից: Իրագննական դասերի միջոցով մինչև բ. բաժ. աշակերտները ծանօթանում են դասարանի, նրա մասերի, իրանց շուրջը գտնուած առարկաների հետ. վերջում կազմում են դասարանի մօտաւոր յատակագիծը: Գ. բաժանմունքում կազմում են ճիշտ յատակագիծերը՝ նախ դասարանի, ապա ամբողջ դպրոցի: Այնուհետև այդ տարուայ ընթացքում անցնում են զիւղ կամ քաղաք, ազգաբնակութիւն, պարապմունքներ, արդիւնաբերութիւն. գաւառ և նահանգ. հանքեր, լեռներ, գետեր, անտառներ, բլուրներ, դաշտեր, հովիտներ, ծով, կղզի, հրուանդան, թերակղզի, պարանոց և այլն: Ի հարկէ, այս բոլորի մասին ուսուցիչն անցնում է այն ղէպքում, եթէ նրանք կան գաւառում կամ նահան-

գում, բացատրելով և հասկացողութիւն տալով միանգամայն նրանց մասին ըստ աշխարհագրութեան:

Ա. և Բ. բաժան. այս առարկային վերաբերեալ իրազննական դասերը սերտ կերպով կապուած են հայոց լեզուի հետ, ուստի, մեր կարծիքով, նպատակայարմար է այդ շրջանում այդ երկու առարկաները միացնել: Գ. բաժան. ամբողջ նահանգի մասին անցնելը հետևեալ պատճառով է. Գ. բաժանմունքից աշակերտների մի մասը կըցանկանան մտնել միջնակարգ հանրագիտական և մասնագիտական դպրոցներ, հետևապէս և կըտեղափոխուեն ուրիշ միջավայրեր. ուստի ցանկալի է, որ այդ ղէպքում, գոնէ, նրանք ճիշտ հասկացողութիւն ունենային իրանց հայրենի գիւղի, գաւառի և նահանգի մասին: Այդ նպատակին մենք կատարելապէս հասած կըլինենք, եթէ տարուայ լաւ եղանակներին աշակերտներին ճանապարհորդել տանք՝ փոքր բաժանմունքներում մօտիկ շրջաններում, իսկ Գ. բաժ-ում աւելի հեռու վայրեր, ընդ նմին նկարել տալով մօտաւոր քարտէզը:

Գ. և Ե. բաժ. Կովկասի ֆիզիքական և մաթեմատիքական աշխարհագրութիւնը նոյն սւղղութեամբ, ինչ ուղղութեամբ անցել են նահանգի մասին Գ. բաժանմունքում: Այդ շրջանում աշակերտներն անցնում են ՚ի միջի այլոց (Կովկասի) երկրի կազմութիւնը, կլիմայ, ֆլօրայ, ֆաունայ, հանքեր, ազգաբնակութիւն (հայեր, վրացիներ, թուրքեր, լեռնականներ և այլ մանր ցեղեր), նրանց պարապմունքները՝ երկրագործութիւն, — ծանօթութիւն հողային հարցի մասին, — խաշնարածութիւն, պարտիզպանութիւն, արհեստներ, — ծանօթութիւն արհեստակցական միութիւնների մասին, — արդիւնաբերութիւն, — ծանօթութիւն բանուորական հարցի մասին, — Կովկասի բաժանումը ըստ քաղաքական կազմութեան, տիրող օրէնսդրական կարգերից տեղեկութիւններ. զիւղական, քաղաքային, գաւառական և նահանգական վարչութիւններ: Քարտէզ և ճանապարհորդութիւն:

Պատմական ակնարկ կովկասի և նրա ազգութիւնների մասին:

2. Բաժանմունք.

«Հայրենագիտութիւն» առարկան այս շրջանից արդէն բաժանուում է մի քանի ճիւղերի. ա. Ազգային պատմութիւն նրա հետ և հարեան ազգերինը, բ. Պետութեան պատմութիւնը և գ. Ամբողջ մարդկութեան պատմութիւնը:

Պատմութեան ուսուցիչը նախ մի ընդհանուր հայեացքով ծանօթացնում է աշակերտներին մարդկային ցեղի ծագման ու զանազան շրջանների (էպօխաների) հետ, աշխատելով միանգամայն ամփոփ տեղեկութիւններ տալ հին ազգերի և նրանց ստորաբաժանումների մասին: Այնուհետև պատմութիւնը բաժանում է վերև յիշած երեք ճիւղերի:

ա. Հայոց պատմութիւն

Արձանագրութիւններ և աւանդութիւններ. Տեղեկութիւններ «մինչև պարթևների հաստատուիլը Հայաստանում» շրջանի մասին՝ հիմնուած նորագոյն ուսումնասիրութիւնների վրայ. Պարթևներ. Քրիստոնէութեան տարածուիլը Հայաստանում և կրօնական պատերազմներ. Արաբների արշաւանքը. Բագրատունիք: Վրացիք նոյն շրջաններում:

բ. Ընդհանուր պատմութիւն.

Հին դար: Ասիական ազգեր. Եգիպտոս, Եւրոպական ազգեր. Արաբներ և Մահմէդ:

գ. Ռուսաց պատմութիւն.

Սլաւոններ, իշխաններ. Թաթարների արշաւանքը մինչև Ռումանեան տոհմը:

է. բաժանմունք.

ա. Հայոց պատմութիւն.

Սելջուկների և Թաթարների արշաւանքները. Հայաստանում քաղաքական իշխանութեան վախճանը. Ռուբին-

եան տոհմը Կիլիկիայում: Լանկթամուր. Օսմանցոց ծագումը և յառաջանալը. Շահ-Աբբաս. մանր իշխանութիւններ Հայաստանի զանազան կողմերում. մելիքներ և Գաւիթ բէկ. Ռուսաց յարաբերութիւնը և Կովկասի տիրապետութիւնը. Ռուս-Տաճկական պատերազմ. Հայկական գաղթականութիւնները և Տաճկահայոց դրութիւնը: Վրացիների դրութիւնը այդ շրջանում:

բ. Ընդհանուր պատմութիւն.

Միջին դար. Գիւտեր, վերածնութեան շրջան. ինկվիզիցիա և կաթոլիկոսութեան դէմ մարտնչողներ. Անգլիա և Ամերիկա. Ֆրանսիա և Մեծ յեղափոխութիւնը. Գերմանիա. Իտալիայի ազատագրութիւնը. Ֆրանս-Պրուսական պատերազմ և հանրապետութեան հաստատուիլը Ֆրանսիայում. Տաճկաստան և Բալկանեան ազգերի ապստամբութիւնը. Նոր գիւտեր և կառավարութիւնների տեսակները:

գ. Ռուսաց պատմութիւն.

Ռումանեան տոհմ. Միխայիլ Ֆէօդորովիչ. Մարտոսների ապստամբութիւնը. Պատրիարք Նիկոն. Պետրոս մեծ. Եկատերինէ II. Նիկոլայ I. Յեղափոխական շարժումներ (դեկաբրիստներ). Ղրիմի պատերազմը. Ալէքսանդր II. Լեոնականների դէմ պատերազմ: Փետրւարեան հրովարտակը. Ալէքսանդր III. Պահպանողական և միապետական կուսակցութիւնների կազմակերպութիւնը և վերաբերմունքը դէպի օտարազաւանները: Նիկոլայ II. Ռուս ճապոնական պատերազմ ու Պետական դումա:

Ծանօթութիւն. Ինքնըստինքեան հասկանալի է, որ նախ քան պատմութիւն անցնելը աշակերտները պէտք է ծանօթ լինին աշխարհագրութեան հետ, ուստի պատմութեան ուսուցիչը միաժամանակ և աշխարհագրութեան ուսուցիչ պէտք է լինի: Հայոց պատմութեան դասերին աշակերտները նախ ծանօթանում են Հայաստանի և հարեան

երկրները քարտէզի հետ սովորում են ֆիզիքական աշխարհագրութիւն, ապա թէ անցնում են պատմութեանը. նոյնը և ընդհանուր ու ուսուսաց պատմութիւնների ժամանակ: Աշխարհագրութիւնը պէտք է անցնել հակիրճ, առանց այն բացատրութիւնների, որոնք արդէն ծանօթ են աշակերտներին հայրենագիտութիւնից: Աշակերտներն արդէն Գ. Գ. և Ն. բաժանմունքներում անցել են աշխարհագրութեան և տիեզերագրութեան վերաբերեալ սկզբնական գիտելիքները. այժմ պէտք է աշխատել որոշ պատմական դէպքերն ու երևոյթները կապել աշխարհագրական տեղերի հետ, որպիսի միջոցը նպաստում է պատմական անցքերի յարատե մնալուն աշակերտների յիշողութեան մէջ:

Ռուսաց պատմութիւնն ու Ռուսաստանի աշխարհագրութիւնն անցնում են ուսուսաց լեզուով, որպէս այդ լեզուին նպաստող միջոց:

Վրաց պատմութեան վրայ երկար կանգ չենք առնում, նախ՝ որովհետև նրանք որոշ շրջաններում հայերի հետ միլնոյն դէպքերին ու բաղդին ենթակայ լինելով, հայոց պատմութիւնն անցնելիս նոյնիսկ այսպէս թէ այնպէս ուսուցիչը պէտք է յիշատակէ և նրանց և երկրորդ՝ մանրամասն ծրագիր կազմելու համար անհրաժեշտ է ունենալ որևէ ուսումնասիրութիւն, որպիսին, դժբաղդաբար, ձեռքի տակ չունինք:

Գ. Բնական գիտություններ:

Սկսում է Գ. բաժ-ից. աշակերտներն այդ տարուայ ընթացքում ծանօթանում են մարդու մարմնի արտաքին մասերի և բաժանումների, այդ մասերին վերաբերեալ մաքրութեան և առողջապահութեան հետ:

- Գ. բաժ. կմախք և մարմնի ներքին մասերը:
- Ն. բաժ. ընդհանուր առողջապահութիւն և բժշկական սկզբնական օգնութիւններ զանազան պատահարների ժամանակ:

Զ. բաժ. Բնագիտութիւն. ոյժեր, նրանց ծագումը և նշանակութիւնը արդի արդիւնաբերութեան մէջ:

է. բաժ. Բնալուծութիւն (քիմիա), գործնական եղանակով՝ փորձերով ծանօթացնել օդի, ջրի և այլ գազերի բաղադրիչ մասերի հետ: Այդ մասերի նշանակութիւնը մարդկանց, կենդանիների և բոյսերի համար: Ծանօթութիւն զանազան խմիչքների միկրոբների ու նրանց անվաս դարձնելու միջոցների հետ: Գինի և օղի պատրաստելու միջոցներ: Զանազան բանջարեղէններ ու պտուղներ թարմ, աղում, շաքարում, քացախում և չորացրած երկար ժամանակ պահելու եղանակներ:

Ինչ վերաբերում է բուսաբանութեան ու կենդանաբանութեանը, առանձին դասեր չենք նշանակում, ի նկատի առնելով, որ նախ՝ աշակերտներն անցել են հայրենի կենդանական ու բուսական աշխահների մասին հայրենագիտութեան դասերին, որի ժամանակ նրանք ծանօթացել են նշանաւոր ու օգտակար կենդանիների, բոյսերի, թռչունների, ձկների ու միջատների մասին և երկրորդ՝ տարրական դպրոցի ծրագրից ու նպատակից դուրս ենք համարում ընդհանուր բուսաբանութիւն և կենդանաբանութիւն առարկաները սխտեմատիք կերպով մշակուած ծրագիրներով անցնելը, համարելով այդ գիւղատնտեսական դպրոցի դասընթացք,

Գ. Մ ա ր ե մ ա ր ի ֆ ա:

Գ. բաժ. Վերջացնող աշակերտները պէտք է իմանան բազմանշան թուերով գործողութիւններ. պարզ կոտորակներ և պարզ անուանական թուեր:

Գ.-ից մինչև է. բաժ. անցնում են. թուարանութիւնն ամբողջովին, հանրահաշիւ՝ մինչև հաւասարութիւններ երկու անյայտերով և սկզբնական գիտելիքներ երկրաչափութիւնից:

Ն. Ռ ու ս ա ց շ ե գ ու:

Ժողովրդական դպրոցում բոլոր առարկաները պէտք է անցնել մայրենի լեզուով. այս է ամենաբնական պահան-

Չը մանկավարժական տեսակէտից: Մակայն մենք ուսաց լեզուն երկու նպատակով անհրաժեշտ և նոյնիսկ պարտաւորացուցիչ ենք համարում. ա. պատանին զպրոցն աւարտելուց յետոյ՝ կեանքի մէջ անհրաժեշտ կարիք պէտք է դգայ այդ լեզուի մէջ. դա այն միջոցներից մէկը պէտք է լինի, որոնցով մասամբ կըթեթեացնէ կեանքի դժուարութիւնները. բ. քաղաքականապէս կապուած լինելով մուսաստանի հետ, պէտք է տիրապետել և նրա լեզուին, որպէս կենդրոնական կառավարութեան հետ կապ ունենալու մի միջոց: Այս բոլորից հետևում է, որ ուսաց լեզուի ուսուցմանը նոյն իսկ առանձին ուշք պէտք է դարձնել: Այդ նպատակին հասնելու համար ցանկալի է, որ այդ լեզուն աւանդողները ծանօթ լինէին լեզու ուսուցանելու նորագոյն միջոցների հետ. բացի այդ՝ ՚ի նկատի առնուէին այն բոլոր ծանօթութիւնները, որ մենք տուել ենք արդէն հայոց լեզուի մասին խօսալիս. այսինքն չբաւականանալ միայն դասարանային դրամուսնքներով: Հայոց դպրոցներում սովորող շատ աշակերտներ ուսաց լեզուի դասերին կանոնաւոր լեզուով պատասխանում են, անծանօթ յօդուածները լիովին ըմբռնում են, բայց դպրոցից դուրս նրանք դժուարանում են խօսալ. նշանակում է նրանց մէջ պէտք է զարգացնել կենդանի, խօսակցական լեզուն: Մի հանգամանք ևս պէտք է աչքի առաջ ունենալ. ժողովրդական դպրոցի նպատակներից մէկն էլ միջնակարգ դպրոցի համար աշակերտներ մատակարարելն է. բայց որովհետև միմիայն լեզուի դասերով դժուար է աշակերտին այնքան ընտելացնել ուսաց խօսակցական լեզուին, որ նա կարողանայ Գ. բաժ-ից ազատ մտնել միջնակարգ դպրոցի ա. դասարանը, ուստի նպատակայարմար է ուսաց լեզուի դասերին այդ շրջանում, որպէս խօսակցութեան միջոց, թուաբանական խնդիրներ ևս վճռել տալ ուսաց լեզուով:

Գ. բաժ. աւարտողները ուսաց լեզուից պէտք է հաւասար լինին ներկայումս գոյութիւն ունեցող գիմնազիայի բարձր բաժանման (старш. отд.) աշակերտներին գիտութեանը:

է. բաժ. աւարտող երեխաները պէտք է գիտենան. ազատ և վարժ ընթերցանութիւն ու ըմբռնումն անծանօթ յօդուածների. շարագրել ծանօթ յօդուածներից ըստ քերականական բոլոր կանոնների. ազատ խօսակցութիւն. ծանօթութիւն նշանաւոր հեղինակների և նրանց երկերի մասին:

2. Ֆիզիկական մարզակներ:

Ազատ մշակուած խաղեր. վագել, ցատկել, լողալ, ծանրութիւններ բարձրացնել. բարձրանալ սիւներով. գործնական աշխատանքներ—այգում՝ փորել բահով, քլունկով,— դաշտում՝ հնձել, վարել որպիսի աշխատանքների միջոցին ծանօթացնել մշակութեան օրինակելի ձևերի հետ:

է. նկարչութիւն և անուագործ:

Աշակերտների մէջ հետաքրքրութիւն ու ճաշակ զարթեցնելու և նրանց բնական ձիւքերը երևան հանելու միջոցներից մէկն էլ նկարչութիւնն է: Աշակերտները նկարում են այն առարկաները, որոնք նրանց ուշադրութիւնը գրաւում են, այսինքն՝ ծանօթ կենդանիների, բոյսերի, ծառերի, տնային կահ-կարասեաց ամանների նկարներ. սարերի, փոքրիկ տեսարանների, գետի, դաշտում մենակ բաւած ծառի, փոքրիկ օրինակելի տնակների և գիւղական այլ շինութիւնների պատկերներ՝ ընդօրինակելով իսկակաւից: Կաւէ իրեր պատրաստել և ծեփել:

Օրիորդները բացի այդ՝ սովորում են և անհրաժեշտ հագնելիք պատրաստելու մշակուած ու պարզ ձևերը, միանգամայն դուրս վճռելով դպրոցներից այն ընդունուած մի շարք ձեռագործները, որոնք բացի ծախքից և ժամանակ վատնելուց ուրիշ ոչ մի բանի չեն ծառայում:

Ը. Ե Ր Գ:

Ժողովրդական երկաձայն, եռաձայն և քառաձայն օրինակելի երգեր. հայկական և կրօնական ձայնագրութիւն. ծանօթութիւն ազգային և կրօնական նուագարանների հետ. ըստ հնարաւորութեան՝ նուագել գործիքների վրայ:

Թ. Կ Ր Օ Ա :

Ի նկատի առնելով մեր հասարակութեան մեծամասնութեան մէջ սիրող հայեացքը կրօնի վերաբերմամբ, քանի որ եկեղեցին պետութիւնից բաժանելու սկզբունքը չէ իրագործուած մեր մէջ, մեր տարրական դպրոցներում պէտք է անցնել այդ առարկան՝ միայն ոչ այն ծրագրով ու չափով, որոնք գործադրուել են մինչև այժմ: Թողնելով մեր պատճառաբանութիւնները պարզել յետագայում, այստեղ կըտանք այն ծրագիրը, որը մենք հնարաւոր ենք գտնում տարրական դպրոցի երեխաների համար:

Մինչև Գ. բաժ. բարոյակրթական գրոյցներ առօրեայ կեանքից, նոյնը յօդուածներից, որոնց ժամանակ աշխատել սաների մէջ զարթեցնել սէր դէպի թռչուններն ու կենդանիները, խնամք դէպի բոյսերը և յարգանք առ «մարդը»: Շօշափելի կերպով ու օրինակներով հասկացողութիւն տան վեհանձնութեան, հաւատարմութեան, աշխատասիրութեան, քաջութեան և այլ վերացական հասկացողութիւնների մասին:

Գ. և Ե. բաժանմունքներում՝ Յիսուսի կենսագրութիւնը և նրա քարոզութիւնները:

Սրանով էլ պէտք է սահմանափակել կրօնի ուսուցումը մեր ժողովրդական դպրոցներում, աւելին վերապահելով աստուածաբանական կուրսերին.

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ քաղաքի կեանքն ու կարիքներն աւելի բարդ են, քան գիւղերինը, ընդհանուր դժերով տալով ժողովրդական դպրոցի լիակատար դասընթացի ծրագիրը, այնուամենայնիւ մենք անհրաժեշտ են գտնում քաղաքներում՝ բացի նախագծած մի նախակրթարանից և եօթն բաժանմունքներից ունենալ և ութերորդ լրացուցիչ բաժանմունք՝ պատանիներին յատկապէս գործնական աշխատանքներին վարժեցնելու համար:

Այդ լրացուցիչ բաժանմունքում կ'աւանդուին.
Ա. կրկնակի իտալական հաշուապահութիւն՝ առևարին

ու արդիւնաբերութեանը վերաբերեալ անհրաժեշտ գրադրութիւններով:

Բ. Տպարանական և կազմարարական աշխատանքներ.

Գ. Արհեստներ՝ ըստ տեղական պահանջների.

- գերձակութիւն,
- կօշկակարութիւն,
- ատաղձագործութիւն,
- փականագործութիւն և այլն:

Դ. Գեղագործութիւն՝ գեղասաներում, որպէս սովորած աշակերտներ, աշխատելու:

Մեր նպատակից դուրս է ժողովրդական դպրոցից հմուտ վարպետներ տալը. սակայն մի մեծ շարիքի և շահագործման առաջը հարկաւոր է առնել: Շատ անգամ պատահում էք 12—15 տարեկան երեխաների, որոնք որևէ արհեստաւորի կամ առևտրականի մօտ 1, 2, 3 և աւելի տարիներ ձրի մնում են միայն նրա համար և այն պատրուակով, որպէս թէ այդքան ժամանակամիջոցում հազիւ նրանք կարողանան ծանօթանալ գործի հետ, որից յետոյ միայն օգտակար կըլինին և վարձ կըստանան: Մեր ծրագրած է. բաժանմունքն աւարտող պատանին այլևս ստիպուած չի լինիլ ենթարկուելու այդպիսի կեղեքման ու ստրկական վիճակի և ոչ էլ իւր անպատրաստութեամբ տաժանելի աշխատանքներով գործ որոնելու: Աւարտողներից իւրաքանչիւրը իւր սիրած ճիւղից արդէն կ'ունենայ որոշ գործնական պատրաստութիւն և ստիպուած չի լինիլ մի քանի տարի ձրի ծառայելու:

Վերջացնելով ուսման ծրագրի մասին մեր խօսքը, պէտք է ՚ի նկատի առնել, որ մենք այստեղ տուել ենք ծրագիրը ընդհանուր վերնագրերով. աւելի մանրամասն կազմելու համար հարկաւոր են աւելի երկար ժամանակ և մի քանի դասատուների մասնակցութիւն. բացի այդ՝ մենք դէմ ենք դասատուին շրջանակների մէջ գնելու մտքին: Քանի որ մենք, մեզ հետ և ուրիշները, չգիտենք աշակերտների պատրաստութեան ու զարգացման չափը, իրաւունք

չունինք որևէ ուսուցչի նշանակելու ամբողջ տարուայ անցնելիքի չափը. այդ իրաւունքը միանգամայն պէտք է թողնել դասատուին, հաւատացած լինելով, որ ոչ մի ուսուցիչ չի ցանկանալ, որ նրա աշակերտները աւելի քիչ իմանան, քան թէ հնարաւոր է նրանց հետ անցնել:

ԱՌՐԿԱՆՆԵՐԻ ԵՒ ՇԱՐՇԹԵՎԱՆ ԳՆՍԵՐԻ ՅՈՐՅԵՎ

Ըստ դասարանների:

Առարկաներ	Գրասարանի.	ՆԱԽԱԿ	Ա. բաժ.	Բ. բաժ.	Գ. բաժ.	Դ. բաժ.	Ե. բաժ.	Զ. բաժ.	Է. բաժ.	Գում.
1 Փրէօբէլեան զբաղմունք.		12	—	—	—	—	—	—	—	12
2 Հայոց լեզու		11/3	6	6	6	6	6	6	6	42/45
3 Հայրենագիտութիւն		—	—	—	2	3	3	—	—	8
4 Հայոց պատմ. և աշխար.		—	—	—	—	—	—	3	3	6
5 Վրաց » » »		—	—	—	—	—	—	2	2	4
6 Ռուսաց » » »		—	—	—	—	—	—	2	2	4
7 Ընդհանուր » »		—	—	—	—	—	—	2	2	4
8 Մարդակազմութիւն		—	—	—	2	3	—	—	—	5
9 Առողջապահութիւն և բժշկական գիտելիքներ		—	—	—	—	—	3	—	—	3
10 Բնագիտութիւն (Физика)		—	—	—	—	—	—	2	—	2
11 Բնալուծութիւն (Химия)		—	—	—	—	—	—	—	2	2
12 Թուաբանութիւն		—	2	3	3	3	3	—	—	14
13 Հանրահաշիւ		—	—	—	—	—	—	2	2	4
14 Երկրաչափութիւն		—	—	—	—	—	—	2	2	4
15 Ռուսաց լեզու		—	11/3	6	6	6	6	6	6	36/39
16 Նկարչութիւն և ձևագ.		—	2	2	2	2	2	2	2	14
17 Երգ		—	2	2	2	2	2	2	2	14
18 Ֆիզիքական մարզանք. (օրեկան 30 րոպ.)		3	3	3	3	3	3	3	3	24
19 Կրօն		—	1	1	1	1	1	—	—	5
		15/18	16/19	23	27	32	32	32	34	211/217

Դ.

Ո Ի Ս Ո Ի Յ Ի Չ

Պարտաճանաչ ու իւր պաշտօնին նուիրուած ուսուցիչը աւելի կարող է անել, քան թէ բազմաթիւ օրէնքներ: Եթէ մի հասարակութեան ապագան կախուած է լաւ դպրոցից, ապա դպրոցը ամբողջովին կախուած է ուսուցչից: Այս հանգամանքն աչքի առաջ ունենալով մենք պէտք է դէպի ուսուցչական ասպարէզ գրաւենք այնպիսի անձնաւորութիւնների, որոնք բացի ուսուցչական կոչումից ունենան և մարդկային բարձր յատկութիւններ. նրանք լինին «մարդ» բառիս ընդարձակ մտքով:

Իժբաղդաբար մինչև այժմ մենք չունինք ուսուցչական իսկական դասակարգ: Ճիշտ է, մենք ունինք և ունեցել ենք դպրոցներ, բայց ուսուցչական կօնսիլներնա՛ — երբէք. իսկ դա մի այնպիսի շարիք է, որի մասին լռելիքն ընդհանակէ դաւաճանել դպրոցական գործին: Այդ պատճառով էլ մենք սուսնաճնապէս կանգ ենք առնում այդ խնդրի վրայ: Այդ շարիքը ստեղծուել է մի շարք պատճառներից:

ա. Գլխաւոր տեղը բռնում է ուսուցչի նիւթականի խնդիրը: Ո՞րքանով պէտք է վարձատրել ուսուցչին. այս հարցին մենք զժուարանում ենք որոշ պատասխան տալ, որովհետև մտածում ենք. ուսուցչի պաշտօնը ամենազրժուարին և նուիրական աշխատանքներից մէկն է. եթէ մի գործակատար, մի առևտրական կամ մի արդիւնաբերող իրաւունք ունի մի քանի տարի աշխատելուց յետոյ գումարներ դիդել, ինչու ուսուցիչն էլ թէկուզ կրկնակի տարիներ աշխատելուց յետոյ չպէտք է առաջիններից կիսով չափ պակաս ապահովութիւն ունենայ: Այն միջոցին, երբ հասարակ գործակատարն այնքան վարձ է ստանում, համեմատաբար իւր աւելի քիչ գործադրած ֆիզիքական աշխատանքի համար, որ կարողանում է անկարիք ապրել,

ուսուցիչը, որ տարիների ընթացքում իւր մտաւոր ոյժն է պատուաստում սաների մէջ, միանգամայն քայքայելով իւր Ֆիզիքականը ու տարիներից յետոյ դառնում մի ջարդուած մեքենայ, միթէ իրաւունք չպէտք է ունենայ այնքան ապահովութիւն ստանալու, թէկուզ որքան մի գործակատար կամ հաշուապահն է ստանում: Այսպէս մտածել են շատերը, այսպէս մտածում են և իրանք ուսուցիչները. սակայն այդ միջոցներով ու յոյսերով առաջնորդուելով չենք կարող խնդիրը վճուել: Ամենաիրական միջոցն է ուսուցչական ասպարէզը գրաւիչ դարձնելու՝ նշանակել ուսուցչին այնքան ոռճիկ ըստ տեղական պայմանների, որով նա կարողանայ անկախ, առանց կարիքի ապրել և ապրեցնել իւր ընտանիքը: Քաղցած փորով չի կարելի Ֆիզիքապէս աշխատել, ուր մնաց մտաւորապէս, երբ նա դեռ մի քանի քաղցածներ էլ տանն է թողել: Եւ այն ուսուցիչը, որ շարունակ կարիքի մէջ է, որ ամբողջ ժամանակ մտածում է անտեսականի մասին, ի՞նչ արդիւնք կարող է տալ: Մինչև այժմ մեր հասարակութիւնը նայել է ուսուցչին, որպէս տիրացուի ու տէրտէրի վրայ և դրա համար էլ հէնց շատ անգամ նրա ոռճիկը գոյացրել է մոմավաճառութիւնից, գանձանակից, մինչև անգամ «խորհուրդ մեծ» շրջելուց, որով ըստ իս ամենամեծ վիրաւորանքն են հասցնում ուսուցչին: Ուսուցիչն էլ, որպէս իւրաքանչիւր աշխատաւոր, իրաւունք ունի պահանջելու, որ իւր վարձն աւելի պատուաւոր կերպով գոյացուի, քան նկարագրածս միջոցներն են: Բացի նիւթական ապրուստից պէտք է ընդմիշտ օրէնք դարձնել, որ ուսուցչի զաւակները բոլոր դպրոցներումն էլ ձրի ստանան և ուսում, և ապրելու միջոց: Որպէս խրախուսանք և ապահովութիւն պէտք է հնգամեակներ մտցնել որոշ յաւելումներով. իսկ որոշ ժամանակամիջոց ծառայելուց յետոյ կենսաթոշակ նշանակել:

բ. Մենք չունինք ուսուցչանոցներ, այսինքն այնպիսի դպրոցներ, որտեղ աւարտողները ձեռնհաս լինին մեր ծրագրած ժողովրդական դպրոցում դասաւանդելու: Մինչև

այժմ մեր տարրական դպրոցներին ուսուցչացուներ տուել են թեմական դպրանոցները, ձեմարանը և պետական միջնակարգ դպրոցները. Սակայն ՚ի նկատի առնելով, որ ժողովրդական դպրոցի ուսուցիչը պէտք է լաւ տիրապետէ մայրենի լեզուին, որից գուրկ են պետական դպրոց աւարտողները, մեր թեմական դպրոցներն էլ իրանց ծրագրով չեն հաւասարում մեր ծրագրած ժողովրդական դպրոցի լիակատար դասընթացին: Իսկ եթէ դրան աւելացնենք և այն, որ հոգևոր դպրոց աւարտողները մեծաւ մասամբ լինում են իրական կեանքից կտրուած, վերացական ու սխալատիկ գաղափարներով վարակուածներ, այն ժամանակ հասկանալի կըլինի նրանց անկարողութիւնը՝ գործնական մարդիկ աւու իրանց յանձնուած դպրոցներից:

գ. Բացի այդ պակասութիւնները, մենք ուսուցիչներ չունինք, այլ ունինք աւելի շուտ գործ որոնողներ: Այս հանգամանքն էլ իւր տխուր պատճառն ունի. ուսուցիչը կապուած է ո՛չ թէ դպրոցի, այլ վարչութեան հետ. իւրաքանչիւր անգամ այդ վարչութիւնը փոխուելիս՝ փոխում է և ուսուցչական կազմը, որի հետեանքը լինում է՝ մի քանի տարի ուսուցչական ասպարիզում գործողների դրսում մնալը: Այդպիսի կամայականութիւններին վերջ տալու համար պէտք է մշակել և գործադրութեան մէջ դնել որոշ հաստատուն օրէնքներ՝ դպրոցներն ու ուսուցիչներին միանգամայն ազատելով զանազան խնամակալներից:



ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԳՊՐԵՆՈՅԻ ՀՐԵՏՈՐԵԱԿԵԹ «ՆԱԽԸ-ԳԻԾ»-Ի ՄԸՍԻՆ:

Մեր ներկայ աշխատութիւնն արդէն պատրաստ էր հրատարակութեան,*) երբ պատահամբ մեր ձեռքն ընկաւ Ներսիսեան դպրանոցի վերոյիշեալ հրատարակութիւնը՝ կազմած Վեհափառ Հայրապետի հրամանով ընտրուած մի մասնաժողովի ձեռքով: Մի կողմ թողնելով «Նախագծի» առաջին մասը, որ վերաբերում է վարչական մասին, մենք կը ցանկանայինք մի փոքրիկ հայեացք ձգել ուսման ծրագրի վրայ:

Նախ քան մի որեւէ խնդրի մասին մանրամասն զեկուցում պատրաստելը՝ անհրաժեշտ է պարզել այն սկզբունքը, որը ղեկավարող պէտք է հանդիսանայ տրուած գործում: Առանց այդպիսի ղեկավարող սկզբունքի իւրաքանչիւր ծրագիր էլ կը մնայ երեւուն, զուրկ հոգեբանական ներքին կապից:

Ինչպէս երևում է յառաջաբանից և կողմնակի յիշատակութիւններից, մասնաժողովի համար իբրև ղեկավարող սկզբունքներ ծառայել են՝ նախ հոգևոր վարչութեան հրամանը՝ կազմել տարրական դպրոցի ծրագիր, երկրորդ՝ կուստուրական երկրներում գոյութիւն ունեցող նոյնանման դպրոցների ծրագիրը:

Առաջին ղէպըում՝ մասնաժողովը ամենայն սրբութեամբ կատարելով հոգևոր վարչութեան հրամանը՝ ցոյց է տուել իւր անսկզբունք լինելը. նրան այսօր հրամայել են կազմել եկեղեցական դպրոցի ծրագիր, նա կատարել է.

*) Սոյն աշխատարիւնը համառոտ կերպով հրատարակուել է 1906 թ. «Մշակ»-ում:

վաղը նրան կը հրամայեն մշակել վանական դպրոցի ծրագիր ու մեր կը թուլթեանը այդ ուղղութիւնը տալ, նա դարձեալ կը կատարէ: Բայց ի՞նչ է ստում կեանքը. միթէ իրօք մեզ այդ տեսակի դպրոցներ են հարկաւոր:

Դպրոցական կեանքում ամենամեծ ժողովրդական պայքարը մղուել է այն խնամակարների դէմ, որոնք ինքնիշխան տէր են հանդիսացել դպրոցին: Իւրաքանչիւր գիտակցութեան հասած ժողովուրդ մղել և մղում է այդ պայքարը: Մասնաժողովը չի ցանկացել ըմբռնել այն անյետաձգելի պահանջը, որ դրել է ամբողջ Ռուսաստանը՝— ազատել դաստիարակչական ու կրթական գործը ինքնակոչ խնամակարներից: Ընդհակառակն, նա մի աւելորդ անգամ ևս կուժում է մեզ, որ դեռ ևս վաղ է երագել իսկական ժողովրդական դպրոցի մասին: Այդպիսով մասնաժողովը տարրական դպրոցի ծրագիր նախագծելիս ոչ թէ ղեկավարուել է մեր արդի կեանքի արտադրած պահանջներով, այլ լով մի որոշ դասակարգի ցանկութիւնների արտայայտիչն է ներկայացել: Նա մոռանում է, որ եթէ այսօր, շնորհիւ մի քանի արտաքին հանգամանքների, դպրոցը վարչական տեսակետից գրուած է մի դասակարգի իրաւասութեան տակ, այդ դեռ ևս չի նշանակում, որ ուսման ծրագիրն էլ պէտք է կազմել ըստ ցանկութեան այդ դասակարգի. նա մոռացել է, որ ինչ տեսակ արտաքին պայմաններ էլ ստեղծուեն, այնուամենայնիւ մենք de facto պէտք է աշխատենք կազմել ու մտցնել գործածութեան մէջ մանկավարժական օրէնքների ու կեանքի պահանջների համաձայն ուսման ծրագիր:

Երկրորդ ղեկավարող սկզբունքը՝ կրոնական տարրական դպրոցների ծրագիրը, ստիպել է մասնաժողովին իւր ծրագրի մէջ ձգել այն ամենը, ինչ որ գտնուել է այդ դպրոցներում: Իսկ զրա հետևանքն ստացուել է այն, որ մասնաժողովի նախագծած ծրագիրը աւելի շուտ մի ժողովածուի պատկեր է ստացել, քան թէ սխառեմաթիք ու հոգեբանօրէն մշակուած ծրագրի. ժողովածու, ուր մթեր-

ուած են այն ամենը, ինչ որ զանազան դասատուներ կազմել են՝ հետևելով մասնաժողովի որոշած «մ տ ա լ ո Ր ա շ ի ա Ր Տ Ի Բ ն ա կ ա ն կ ե ն տ ր ո ն ա ց մ ա ն» սխառմանը։ Թերևս նրանցից իւրաքանչիւրն աշխատելով ըստ կարելոյն ճոխ ու հարուստ ներկայացնել իւր առարկան։

Իսկ թէ քանի տարեկան երեխաների համար է նախագծած այդ ծրագիրը, յայտնի չէ, որովհետև նա այդ չի որոշում։ Դրանից հետևում է, որ տարրական դպրոցներում այն հասակի երեխաներ պէտք է ընդունել, որոնք ընդունակ լինեն ծրագրած ուսումն անցնել։— մի հակաբնական ու հակամանկաբարձական սկզբունք, որով ղեկավարուել են և մեր 70-ական ու 80-ական թուականների նոյնամասն ծրագիրները մշակողները։

Դիմենք փաստերին։

Աւանդելիք առարկաների մէջ՝ ըստ կարգի առաջին տեղը տալով կրօնին մասնաժողովն ա. դասարանի (բաժանմունքի) աշակերտներին տալիս է Յիսուսի երկրաւոր կեանքի համառօտ նկարագրութիւնը և 7—8 մանկական հէքիաթներ, իսկ բ. դասարանից (բաժանմունքից) սկսում է հին ուխտի պատմութիւնը Աբրահամ նահապետից (ի՛նչու ոչ Ադամից). ճիշտ այնպէս, ինչպէս մեր 80-ական թուականների դպրոցներում, միայն այն տարբերութեամբ, որ այն ժամանակ հին ուխտի պատմութիւնն անցնում էին ա. դասարանից սկսած (մասնաժողովի Դ. դասարանից), իսկ այժմ այդ միևնոյնը պէտք է սկսեն անցնել երկու տարի առաջ։

Մի կողմ թողնելով այդ հանգամանքը, անհրաժեշտ է պարզել հետևեալը. հարկաւոր է արդեօք Աստուածաշունչն անցնել մեր դպրոցներում, որպէս կրօնի ուսմունք, և ո՞րքան են համապատասխանում նրա մէջ ներկայացրած բարոյական սկզբունքները ներկայ բարոյականութեան և ճշմարտութեան ու արդարութեան գաղափարներին։

Մինչև այժմ ինչպէս մենք, նոյնպէս էլ բոլոր քրիստոնեայ ազգերը կրօն ասելով հասկացել են Աստուածա-

շունչը, որտեղ բացի այն որ մթերուած են շատ խայտառակ արաբքների ու արկածների նկարագրութիւններ, այլև իւրաքանչիւր անիրաւութիւն միշտ վարագուրում է Եհովայի հեղինակութեամբ. օր. Աբրահամի վարմունքը Հագարի հետ, Դովտի կեանքը, Յովսէփի, Դաւթի ու Սողոմոնի սիրային արկածների նկարագրութիւնները և ուրիշ շատ շատերը, որոնք, եթէ պատահէին ներկայումս, բացի հասարակութեան արգահատանքին արժանանալուց, նրանց գործողներն էլ դատաստանական պատասխանատուութեան կ'ենթարկուէին։ Մրանից պարզ է, որ երեխաների ուղեղը վարակել հազարաւոր տարիներ առաջ կազմուած կասկածելի աւանդութիւններով, որոնք ներկայ կեանքի հետ ոչ մի աւրնչութիւն չունին, բոլորովին աւելորդ է։ Իւրաքանչիւր ազգ իւր նախապատմական շրջանը զարդարել է զանազան դիցաբանական վէպերով։ Հրէաները՝ արևելեան ազգերից մէկը, նոյնպէս տուել են այդպիսին, որը մի դարաւոր նախապաշարմունքի շնորհիւ ս. գիրք անունն է ստացել և որն էլ այդ նախապաշարմունքի շնորհիւ մինչև այժմ աւանդում է մեր մատաղ սերնդին, որպէս կրօն։ Կրօնն ընդհանրապէս ազգերի տիրապետող դասի պահանջների արտայայտութիւնն է զանազան էպոսաներից մնացած. և, եթէ հազարաւոր տարիներ առաջ՝ շնորհիւ անգլիտակից, բնութեան գաղտնիքներին անտեղեակ մասսայի, զանազան բռնաւորներ իրանց կամայականութիւններն ու բարբարոսութիւններն իրաւաբանական հողի վրայ դնելու համար հողի ու մարմին են դարձրել ժողովրդի մէջ անարդար ու բարոյականութեան գաղափարին հակառակ սկզբունքներ, եթէ նրանք այդ ուղղութեամբ ստեղծել են «վրէժխնդիր», «չար» ու «անարդար» Եհովաներ, միթէ այդ հանգամանքը կարող է որպէս սկզբունք ծառայել և այժմ, երբ արդարութիւնն ու ճշմարտութիւնը նոր շրջանի մէջ են մտել։ Մեր նպատակից դուրս լինելով Աստուածաշնչի քննութիւնը, բաւականանում ենք բերած թոռացիկ փաստերով՝ ցոյց տալու համար, թէ որքան նպատա-

կայարմար ու օգտակար է նրանով մանուկ սերնդին բարոյակնանութեան ու արդարութեան մասին գաղափար տալը:

Մանկավարժութեան տեսակէտից արդէն տիրապետող է հանդիսանում այն սկզբունքը, որ երեխաներին տարրական դպրոցի հասակում պէտք է շօշափելի դարձնել այն առարկան, որի մասին անցնում են. նրանց չպէտք է թողնել կասկածներ շի ղիմանում քննութեան:

Կրօնից յետոյ երկրորդ տեղը տրուած է պատմութեանը, որն սկսւում է Գ. դասարանից (բաժանմունքից) Հայոց պատմութեամբ:

Երբ պէտք է տարրական դպրոցներում պատմութիւն անցնել: Այն երեխան, որ փոքրիկ գաղափար չունի իւր միջավայրի, ներկայ հասարակական կազմի, տիրապետող կառավարչական ձևի ու օրէնքների մասին, նա չի կարող և իրան ներկայացնել, պատկերացնել նախապատմական մարդկանց կառավարչական ձևը և նիստ ու կացը. քանի նա չգիտէ ներկայ աշխատաւոր դասի պարապմունքները, քանի նրան անծանօթ են արդի արդիւնաբերութիւնը իւր արտայայտումներով, նա չի կարող և իւրացնել նրանց ծագման պատմութիւնը: Պարզեք մեր ասածը. օր. Գանգակի նահանգի, Շուշու գաւառի, վարանդ գաւառակի Հացիկ գիւղացի երեխայի համար ո՞ր բանն աւելի գիւրըմբռնելի ու մատչելի կըլինի. իրանց Հացիկ գիւղի նկարագրութիւնը, թէ գանձակ քաղաքինը. կամ այդ երեխայի համար ո՞ր բանն աւելի շօշափելի ու հասկանալի կըլինի. իրանց գիւղացիների նիստ ու կացը, թէ՛ անյիշելի ժամանակներում գոյութիւն ունեցած նախամարդունը: Շատ պարզ է, որ այդ երեխային աւելի մատչելի է Հացիկ գիւղը, ուր ինքը ծնուել ու մեծացել է, որտեղ ունին արօտ ու այգի, պարտէզ ու արտ: Իսկ երբ նա այդ բոլորի մասին սովորել է, այնուհետև դժուար չի լինի նրա համար և հարեան գիւղի նկարագրութիւնը կամ Գանձակ քաղաքինը: Հետևապէս երեխային նախ պէտք է տալ ներկայ կենդա-

նի միջավայրը, ապա, երբ նա ընդունակ կըլինի ուշալ կեանքը տարբերել վերացականից, երբ նա ճշգրիտ դէպքերը ընդունակ կըլինի գանազանել դիցաբանութիւնից, այդ ժամանակ միայն կըտանք նրան սիստեմատիք կերպով մշակուած պատմութիւն: Մենք նախ պէտք է պատրաստենք նրանց քննադատօրէն նայելու անցածի վրայ, ապա թէ տանք և դիցաբանութիւն և նրան հետևող ճշգրիտ պատմութիւն: Այն ժամանակ այդ աւանդութիւններն ու նախապատմական կեանքը իրանց որոշ տեղը կըբռնեն երեխայի ուղեղում առանց խանգարել կարողանալու ուշալ գիտութիւններին: Ուրեմն գ. դասարանը մենք գտնում ենք անպայման վաղաժամ պատմութիւն անցնելու համար, քանի որ նրանք չգիտեն մանրամասն հայրենագիտութիւն:


Հ ա յ Ր Ե Ն ա գ ի տ ու թ իւ Ն . Կովկասցի երեխայի հայրենիքն է՝ նախ այն գիւղը կամ քաղաքը, ուր ինքը ծնուել է, երկրորդ՝ այն գաւառը, որտեղ գտնւում է իրանց գիւղը, երրորդ՝ այն նահանգը, որի մէջ մտնում է գաւառը, չորրորդ՝ ամբողջ Կովկասը, որի մէջ է նահանգը և, վերջապէս, ամբողջ Ռուսաստանը, որի հետ քաղաքականապէս կապուած է Կովկասը: Այս ուղղութեամբ էլ պէտք է կազմել հայրենագիտութեան ծրագիրը: Սակայն մասնաժողովի նախագծած ծրագրով աշակերտները գ. դասարանում (բաժանմունքում) սկսելով բնագաւառից՝ անցնում են երկրագնդի ու նրա մասերի, յետոյ անգրկովկասի, որից յետոյ Ռուսաստանի, ապա Ասիական Տաճկաստանի ու Պարսկաստանի մասին: Չգիտենք, ինչով է առաջնորդուել մասնաժողովը այսպիսի ծրագիր տալով հայրենագիտութեան անուան տակ: Եւ վերջապէս դասատան բնագաւառից յանկարծ ինչպէս պէտք է թռչէ երկրագրնդին, այդտեղից Անդրկովկասին, յետոյ Ռուսաստանին և այլն: Սրանից երևում է, որ մասնաժողովը պատմութիւն և հայրենագիտութիւն իրար հետ շփոթել է. պէտք է տարբերել այդ երկուսը իրարից: Պատմութեան դասերին աշակերտները որոշ հասակում ծանօթանում են հայի հին քա-

դաքական կեանքի ու նրա սահմանների հետ, ուր մտնում է և Տաճկա-Հայաստան և Արտազ ու Շաւարշան Փայտակարանի հետ: Եթէ Պարսկաստանն անցնում է նրա համար, որ այնտեղ կան գաղթեցրած հայեր, ապա այդ միևնոյն հայրենագիտութեան դասերին ինչո՞ւ չպէտք է անցնել և օր. Բողարիան ու Ամերիկան, ուր դարձեալ հայեր կան: Եթէ հայերը հին ժամանակներն Ոքսոս և Նաքսարատէս գետերով յարաբերութիւն ունէին Միջին Ասիայի և Հնդկաստանի հետ, որի հետևանքն եղել է այդ վայրերում հայկական գաղթականութիւնների հիմնելը, մի՞թէ այդ հանգամանքը հիմք ընդունելով՝ այդ տեղերի էսնօգրաֆիան էլ երեխաներին պէտք է տանք, որպէս հայրենագիտութեան մի մասը: Այդ բոլորը կազմում են գաղթականութեան պատմութեան մի մասը, որն անպայման ազգային պատմութեանն է կցւում:

Բացի այդ՝ մասնաժողովը հայրենագիտութիւն առարկան անդամահատելով դարձրել է մի քանիսը. այսպէս իրազննութիւն, քաղաքացիական ուսմունք, մինչդեռ, ինչպէս ընթերցողը կարող է տեսնել մեր առաջարկած ծրագրից, դրանք կազմում են հայրենագիտութեան մի մասը: Մասնաժողովը անդամահատելով այդ առարկան թէ ներքին կապն է խախտել և թէ գործը բարդացրել:

Այստեղ ներկայացնելով այն գլխաւոր պահասութիւնների մասին, որ մենք նկատել ենք, թողնում ենք դպրոցական ասպարիզում գործողների լուրջ ուշադրութեանը՝ վճռելու թէ մասնաժողովի նախագծած ծրագիրը որքան է համապատասխանում ու բաւարարութիւն տալիս թէ մանկավարժութեան կանոններին և թէ կեանքի պահանջներին:





300

« Ազգային գրադարան



NL0211516

46.067

